

**ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾՈՒՄ**

Մանվելյան Ա. Ռ.

Հոդվածում ներկայացված է ուսուցման գործընթացի կազմակերպման ձևերից մեկը, որն իրականացվում է ինտեգրված ուսուցման օգնությամբ: Դիտարկվում են կրթության որակը ձևավորող հիմնական բաղադրիչները: Շեշտադրվում է զարգացնող ուսուցման գաղափարը: Հոդվածի նպատակն է ընդգծել ինտեգրված ուսուցման նշանակությունը սովորողների ստեղծագործական կարողությունների ձևավորման գործում՝ որպես զարգացնող ուսուցման իրականացման անհրաժեշտ պայման:

Բանալի բառեր. ինտեգրված ուսուցում, զարգացնող ուսուցում, կրթության որակ, ստեղծագործական կարողություն, դատողականություն, բանականություն, մտահանգում, վերացարկում:

Կրթական համակարգում իրար հաջորդող բարեփոխումները ուղղված են հայտնաբերելու կազմակերպչական և բովանդակային նշանակության խնդիրների նոր մեթոդաբանական լուծումներ, որոնք կնպաստեն կրթության որակի բարձրացմանը: «Կրթության որակ» հասկացությունը բազմաբաղադրատարր է, և դրա հետ կապված կարևոր է անդրադառնալ հետևյալ հարցերին. ա) կրթության բովանդակությանը, բ) ռազմավարությանը, գ) կրթական գործընթացի կազմակերպման ձևերին, դ) կրթական միջավայրի առանձնահատկություններին, ե) սովորողների ուսման դրդապատճառների ձևավորվածությանը և այլն: Հաշվի առնելով վերոհիշյալը՝ կարող ենք իրավամբ ասել, որ այս բաղադրատարրերը սերտորեն կապված են միմյանց հետ, փոխընդհանուր են իրար և բխում են իրարից: Խոսելով կրթության բովանդակության

«կարողություններ և հմտություններ» բաղադրիչի մասին՝ պետք է ընդունել, որ նրանում ներառված է ճանաչողական, տրամաբանական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության տարրեր, այսինքն՝ այն ամենը, ինչն անհրաժեշտ է յուրաքանչյուր մարդու՝ ստեղծագործ անձնավորություն դառնալու համար: Միաժամանակ պետք է համաձայնել այն մտքին, որ սովորողների ստեղծագործական կարողությունների ձևավորումը պայմանավորված է կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետ ձևերի ընտրությամբ: Տեղին է նաև ասել, որ ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի ուսուցման ճիշտ մեթոդի ընտրությունը: Մ. Գ. Աստվածատրյանը «մեթոդ» հասկացությունն օգտագործում է երկու տարբեր իմաստներով՝ ա) որպես ուսուցման համակարգ կամ ուղղություն (ընդհանուր իմաստով) և բ) որպես ուսուցման եղանակներից մեկը (մասնավոր իմաստով) [1, 43]: Նկատենք, որ ուսուցման մեթոդի մեջ ամենակարևորը երեխայի մեջ թաքնված հնարավորությունների խթանումն ու զարգացումն է: Դրա հետ կապված մեջբերելով Մ. Վ. Ստեպանովի դիտարկումը, ըստ որի՝ կրթական գործընթացը պետք է կառուցել այնպես, որ նպաստի երեխաների մտածողության զարգացմանը, անհրաժեշտ գիտելիքների որոնմանն ու կիրառմանը [5, 15], հավելենք, որ այն օգնելու է սովորողներին սեփական ստեղծագործական հնարավորությունների բացահայտմանը:

Սույն հոդվածի նպատակն է ընդգծել ինտեգրված ուսուցման դերը սովորողների մոտ ստեղծագործական կարողությունների ձևավորման գործընթացում: Թեպետ ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են՝ հիմնվելով նույն նյութի վերաբերյալ տարբեր առարկաների տված գիտելիքների վրա, բայց, ինչպես նշում է Տ. Գ. Բրաժեն, ինտեգրումը միայն տարբեր առարկաների գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն [4, 59]:

Ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրված ուսուցումը ներկայացվում է նոր տեսանկյունով: Այն զարգացնող է, բազմաբովանդակ, ներառում է և՛ զարգացման սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողների, և՛ միջառարկայական կապերի կիրառումը, և՛ բազմահամակազմային դասարաններում իրականացվող գործընթացները: Ե. Ա. Եկժանովայի դիտարկումով՝ ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա, պետք է ունենա զարգացնող, դաստիարակող բնութագիր, որը

ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում [3, 52]:

Այս հոդվածը մի փորձ է՝ ներկայացնելու ինտեգրված ուսուցման այն բաղադրատարրը, որը, հիմնվելով միջառարակայական կապերի կիրառման վրա, դառնում է սովորողների ստեղծագործական կարողությունները ձևավորող ուսուցում:

Ստորև ներկայացնում ենք 6-րդ դասարանում բնագիտության դասի նկարագրություն, որը կարելի է իրականացնել «ինտեգրված ուսուցման» օգնությամբ: Այն նպատակ ունի նաև ստեղծագործական կարողությունների ձևավորմանը: Նպատակահարմար ենք գտնում «ինտեգրված ուսուցման» կիրառումը իրականացնել «Լուսային և ձայնային երևույթներ» թեմայի ամփոփման ժամանակ՝ փորձելով ցույց տալ նշված թեմայի ամփոփման միջոցով սովորողների ստեղծագործական կարողությունների զարգացման հնարավորությունը: Հաշվի առնելով Լ. Ս. Վիգոտսկու տեսակետը, ըստ որի՝ ստեղծագործությունը մարդու գոյության և էական ուժերի դրսևորման անհրաժեշտ պայմանն է, աշխարհի նկատմամբ վերաբերմունքի հոգևոր ու գիտակցական առանձնահատուկ վիճակը [5, 24], պետք է նկատենք, որ հատկապես այս թեմայի ամփոփումը՝ ինտեգրված ուսուցման եղանակով, սովորողների մոտ ձևավորելու է իրականի ու երևակայականի սահմանները, որը տանելու է նրանց համար բացարձակ ճշմարտության բացահայտմանը: Ընդունելով, որ բնագիտություն առարկան ինքնին հիբրիդային առարկա է, քանի որ իր մեջ ներառում է քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա, աշխարհագրություն և դրանով հանդերձ՝ նպաստում է սովորողների մոտ ընդհանուր բնագիտական հայացքների ձևավորմանը, տվյալ թեմայի ամփոփումը ուղղորդում է այդ գործընթացը դեպի սովորողների մտահայեցողություն: Նշենք, որ թեմայի ամփոփումը արդյունավետ իրականացնելու համար մանկավարժի կողմից սովորողներին պետք է առաջադրվի թեմայի մեջ մտնող դասերի կրկնություն, ցրող, հավաքող ուսանյակների, աչքի, հեռատեսության և կարճատեսության մոդելների պատրաստում՝ ըստ դասագրքի սխեմաների [2, 80-83]: Նշված մոդելների պատրաստումը նպաստելու է ոչ միայն սովորողների գործնական կարողությունների, տարածական պատկերացումների և ստեղծագործական մտածողության զարգացմանը, այլև համադրելու է տեսական գիտելիքները կիրառական հմտությունների հետ: Կապված վերոհիշյալի հետ՝ ուսուցիչը կարող է

աշակերտներին հանձնարարել, բացատրել իրենց ներկայացրած մոդելները՝ անդրադառնալով բնության մեջ և մարդու կյանքում դրանց նշանակությանը: Այսպես, օրինակ, քանի որ թեմայի մեջ մտնում է նաև «Լույսը և գույնը բնության մեջ» [2, 84], կարելի է գործնական աշխատանքի ձևով իրականացնել լույսի ցրումը պրիզմայի օգնությամբ, որի միջոցով բացատրություն տալ բնական երևույթի՝ ծիածանի առաջացմանը՝ կապելով գիտական և բնական երևույթները: Կարելի է հանձնարարել նաև գործնականում պատրաստել ապլիկացիա «Ծիածան»՝ բացատրելով ապլիկացիայի կատարման եղանակները, գույների նշանակությունը: Վերջինս նպաստելու է բնական ճանաչողության գործընթացին, իմացական գործընթացի մոտեցմանը և դրանով իսկ նրանց մոտ զարգացնելու է հետաքրքրասիրությունը, երևույթների մեջ թափանցելու ձգտումը: Իսկ նշված գործողությունները ենթադրում են սովորողների ստեղծագործական մտածողության զարգացում, քանի որ, ինչպես դիտարկում է Դ. Բ. Բոգոյավլինսկին, ստեղծագործական մտածողությունը իր մեջ որպես մտածողության բաղադրատարրեր ներառում է մտքի ճկունությունը, ինքնատիպությունը, արագությունը, երևակայությունը, խորաթափանցությունը, բացառիկ հետաքրքրասիրությունը [3, 29]:

Անդրադառնալով ձայնի աղբյուրների տարածմանը, ձայնի ընկալմանը կենդանիների կողմից, «Լսողության հիգիենա» նյութի ամփոփմանը՝ նկատենք, որ ուսուցիչները սովորողներին հնարավորություն են տալու տարբեր հարցերին տրված պատասխանների օգնությամբ միավորելու կենդանաբանության, անատոմիայի, ֆիզիկայի, բժշկության, տեխնոլոգիայի, կերպարվեստի վերաբերյալ գիտելիքները: Նման հարցերից են, օրինակ՝ 1. ինչպիսի՞ն է մարդու լսողության ապարատի կառուցվածքը, 2. ո՞ր երևույթն են անվանում արձագանք, 3. Ինչու՞ նույնիսկ գիշերները չղջիկները շրջանցում են արգելքները և այլն [2, 88-90]: Իհարկե, պետք է անդրադառնալ նաև կերպարվեստի անիմալիստական ժանրին:

Տեսական գրականության ուսումնասիրությունը և մանկավարժական փորձի վերլուծությունը հնարավորություն են տալիս ասելու, որ ինտեգրված ուսուցմամբ դասապրոցեսի իրականացումը բնութագրվում է մի շարք օրինաչափություններով, որոնցից մասնավորապես առանձնացնենք հետևյալները.

- Դասի համար ընտրված դիդակտիկ նյութի շրջանակներում դասագրքային և լրացուցիչ գրականության հասկացությունների ու գաղափարների համադրումը:
- Դասապրոցեսի անցկացումը ինչպես մեկ, այնպես էլ մի քանի ուսուցիչների մասնակցությամբ, որոնք կարող են հանդես գալ որպես խորհրդատու-մանկավարժներ:
- Սովորողների ուսուցման դրդապատճառների ձևավորումը:
- Սովորողների կողմից գիտելիքի համակողմանի, բազմաշերտ և կայուն յուրացումը:
- Սովորողների ստեղծագործական և հետազոտական կարողությունների ձևավորումը:

Համակողմանիորեն դիտարկելով ինտեգրված ուսուցման գաղափարը՝ նկատենք, որ դրա արդյունավետ իրականացման համար ուսուցչի գործողությունները պետք է կրեն ստեղծագործական բնույթ: Քանի որ ինտեգրված ուսուցումը ինքնին նշանակում է դուրս գալ մեկ առարկայի շրջանակներից, կարծրատիպային մտածողությունից անցում կատարել իրավիճակային և իմպրովիզի տարրեր պարունակող մտածողության: Ինտեգրված ուսուցման կիսաոմամբ դասապրոցեսի կազմակերպումը ենթադրում է հաղթահարել խնդիրների մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել տեղեկատվության շրջանակը, սովորողներին ներառել որոնողական, ստեղծագործական գործունեության մեջ: Ինչպես նշում է Ա. Յա. Դանիլյուկը, «ինտեգրված ուսուցումը հնարավորություն է տալիս խորացնելու ընկալման գործընթացը, հստակեցնելու հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնելու թեման, միավորելու սովորողների փորձն ուսումնասիրվող նյութի տեսական վերլուծության հետ [5, 89]:

Այսպիսով, ինտեգրված ուսուցումը սովորողների մեջ ստեղծում է նախադրյալներ՝ ձևավորելու և զարգացնելու համար ինչպես առարկայական, այնպես էլ ընդհանուր ուսումնական կարողություններ՝ նպաստելով սովորողների ինքնուրույն, մտավոր, հետազոտական գործունեության հնարքների տիրապետմանը և ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Ընդունելով, որ ստեղծագործական մտածողությունը գիտական մտածողության հիմքն է, որի միջոցով սկիզբ են առնում նոր մտքեր, գաղափարներ, մանկավարժը կարող է դա օգտագործել ուսուցման գործընթացը բնական ճանաչողության գործընթացին նմանեցնելու, սովորողների մոտ ուսուցման նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու և սովորելու դրդապատճառները

զարգացնելու ուղղությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մտածողության զարգացումը որոշիչ դեր է խաղում ճանաչողության ոլորտում, պետք է հավաստենք, որ ինտեգրված ուսուցման կիրառումը հնարավորություն է տալիս սովորողներին ներթափանցել ուսումնասիրվող երևույթների ու գործընթացների ներքին կառուցվածքի մեջ, բացահայտել պատճառահետևանքային կապերը, վերլուծել, համադրել, հակադրել, ընդհանրացնել, հայտնաբերել շարժիչ ուժերը, սահմանել օրինաչափությունները: Այս ամենի արդյունքում սովորողների մոտ զարգանում են մտածողության երկու մակարդակները՝ դատողականությունը և բանականությունը, որոնք էլ իրենց հերթին հանգեցնում են մտահանգմանը և մտածողության բարձրագույն աստիճանի՝ վերացարկման ձևավորմանը:

ЗНАЧИМОСТЬ ИНТЕГРИРОВАННОГО ОБУЧЕНИЯ В ФОРМИРОВАНИИ ТВОРЧЕСКИХ НАВЫКОВ УЧАЩИХСЯ

Манвелян А. Р.

В статье представлен один из видов организации процесса обучения, который реализуется посредством интегрированного обучения. Рассматриваются основные средства, образующие качество обучения. Подчеркивается идея развивающегося обучения. Цель статьи – выделить значимость интегрированного обучения в формировании и повышении творческих навыков учащихся.

Ключевые слова: интегрированное обучение, развивающее обучение, качество образования, творческий навык, суждение, интеллект, рассуждение, абстракция.

THE IMPORTANCE OF INTEGRAL LEARNING IN FORMATION OF STUDENTS' CREATIVE SKILLS

Manvelyan A. R.

One of the learning process organization types which realizes by means of integral learning has been presented in the article. The main reasons of developing the quality of learning have been considering. The idea of developed study is underlining. The aim of the article is to pick out the meaning of integral learning in developing and improving student's creative skill.

Keywords: integral learning, developing study, the quality of education, creative skill, assessment, intellect, discourse, abstraction.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածատրյան Մ. Գ. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա Եր.: «Լույս»: 1985: 390 էջ:
2. Ղազարյան Է., Թռչունյան Ա., Մելիքյան Գ., Խաչատրյան Հ. Բնագիտություն դասագիրք 6-րդ դասարանի համար. Մաս 1, Վերահրատարակություն: Երևան: «Աստղիկ» գրատուն: 2019: 160 էջ:
3. Богоявленская Д. Б. Субъект деятельности в проблематике творчества // Вопросы психологии. 1999. N 2. С. 35-41.
4. Браже Т. Г. Интеграция предметов в современной школе. // Литература в школе. 1996. № 5. С. 59-63.
5. Выготский Л. С. Воображение и творчество в детском возрасте.-СПб.: Союз. 1997. 93 с.
6. Данилюк А. Я. Учебный предмет как интегрированная система. // Педагогика. 1997. № 4. С. 89-92.
7. Екжанова Е. А. Резникова Е. В. Основы интегрированного обучения: Учебное пособие для вузов (Текст предоставлен правообладателем <http://www.litres.ru>) Москва. Дрофа. 2008. 207 с.
8. Степанова М. В. Организация учебно-исследовательской деятельности старшеклассников в профильной школе. СПб., изд. «КАРО». 2005. 400 с.

Տեղեկություններ հեղինակի մասին
Մանվելյան Ա. Ռ. - դասախոս
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ anzhelik.manvelyan@bk.ru

Տրվել է խմբագրություն՝ 22.09.2021
Գրախոսվել է՝ 20.11.2021